ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԵՐԹԱԿԱՆ (ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ) ՆԻՍՏԻ

ք. Երևան **26 դեկտեմբեր 2019թ.**

2019 թվականի դեկտեմբերի 23-ին տեղի ունեցավ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ Կառավարման խորհուրդ) հեթական նիստը (հեռակա), որի ընթացքում որոշվեց նիստի օրակարգի բոլոր կետերի վերաբերյալ որոշումն ընդունել հեռակա քվեարկության արդյունքում:

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2019 թվականի դեկտեմբերի 24-ին և ավարտվեց 2019 թվականի դեկտեմբերի 26-ին:

Քվեարկությանը մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի նախագահի պարտականությունները ժամանակավոր կատարող՝

Ս.Պապիկյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ա. Ասոյան ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ռ.Գրիգորյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Բրուտյան ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Ա. Ավանեսյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Վ. Վերմիշյան ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Ս. Թովմասյան ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար

Ա. Դանիելյան Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության

ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Ա. Պետրոսյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Կարապետյան	«Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
Ս. Թովմասյան	«Ճարտարապետության և շինարարության ՀՀ ազգային համալսարան» հիմնադրամի ճարտարապետության ֆակուլտետի դեկան (համաձայնությամբ)

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությանը չի մասնակցել Կառավարման խորհրդի նախագահ՝ Ֆելիքս Ցոլակյանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Հաստատել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը:
2. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2019 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում կատարված ուսումնասիրությունների, բացահայտված ռիսկերի վերլուծության և խնդիրների վերաբերյալ հաշվետվությանը:
3. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդոլոգիային:
4. Հաստատել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը:

Քվեարկության համապատասխան նյութերը ուղարկվեցին Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Քվեարկությունը համարվեց կայացած:

Քվեարկության արդյունքում՝

1. Ս.Պապիկյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
2. Ա. Ասոյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
3. Ռ. Գրիգորյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
4. Կ. Բրուտյանը 1-ին, 2-րդ, 4-րդ հարցերին քվեարկեց կողմ, իսկ 3-րդ հարցին՝ դեմ
5. Ա. Ավանեսյանը 1-ին, 2-րդ ,3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
6. Վ. Վերմիշյանը 1-ին, 2-րդ , 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
7. Ս. Թովմասյանը 1-ին, 2-րդ , 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
8. Ա Դանիելյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
9. Ա. Պետրոսյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
10. Ա. Կարապետյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ:
11. Սարգիս Թովմասյանը 1-ին, 2-րդ հարցերին քվեարկեց դեմ , իսկ ՝ 3-րդ և 4-րդ հարցերին՝ կողմ

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 10 կողմ, 1 դեմ:
Հարց 2-րդ՝ 10 կողմ, 1 դեմ:
Հարց 3-րդ՝ 10 կողմ, 1 դեմ:
Հարց 4-րդ՝ 11 կողմ, 0 դեմ:

Կառավարման խորհրդի անդամներ Կարեն Բրուտյանը, Արման Դանիելյանը, Սարգիս Թովմասյանը և Արսեն Կարապետյանը ներկայացրեցին հատուկ կարծիքներ, որոնք կցվում են սույն արձանագրությանը:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը:

2. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2019 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում կատարված ուսումնասիրությունների, բացահայտված ռիսկերի վերլուծության և խնդիրների վերաբերյալ հաշվետվությանը:

3. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդոլոգիային:

4. Հաստատել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը:

Կառավարման խորհրդի նախագահի պարտականությունները

ժամանակավոր կատարող՝ _____ **Ս. Պապիկյան**

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ն.Մկրտչյան**

ստորագրություն